ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ

## ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0053, ԵՐԵՎԱՆ, ԱՐԻՆ ԲԵՐԴԻ 3 ՆՐԲԱՆՑՔ, 3 :

ՀԵՌ.` +374 10 472 760
ՖԱՔՍ` +374 10 434 412; +374 10 472 771
Էլեկտրոնային փոստ` mailbox@yccpp.com

No: 202

14 . 04 . 2014թ

<<Շրջանակային համաձայնագրերով տնտեսական սանհիգիենիկ և լվացքի միջոցների գնման մասին>>

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/11-14/9»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ը, հասցեն` ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեով մինչև 2014թ. ապրիլի 25-ը, ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արմեն Պետրոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության` ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ում, հասցեն` ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3, 2014թ. ապրիլի 25-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերումը:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար` տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների (որը կազմված է 15 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում: Հայտերը կգնահատվեն ըստ չափաբաժինների:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված`

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ purchase@yccpp.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 16 էջ:

Հարգանքով

Գնումների համակարգող՝
Պայմանագրային բաժնի
առաջատար մասնագետ Ա. Պետրոսյան

Հավելված 1
**«ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/9» ծածկագրով**
***ընթացակարգի հրավերի***
***N ------------------------------------ ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

-------------------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կողմից N ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/9 ծածկագրով հայտարարված ընթացակարգի ------------------------------------------------------------------------------------------------ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

-------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

---------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

---------------------------------------------------------------------------------------------------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

------------------------------------------------------------------------------------------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

------------------------------------------------------------------------------------------------ ------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«--------» ------------------- 20-----թ.
(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված 2**
**«ԵՐՁԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/9» ծածկագրով**
*ընթացակարգի հրավերի*
***N* «ԵՐՁԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/9» *ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԵՐՁԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/1-14/9 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը),այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________-ն առաջարկում է

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |

***3-րդ սունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա սփյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սունյակում:.**

------------------------------------------------------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

---------------------------------------------
(ստորագրությունը)

Կ. Տ.
«_______» ______________ 20____թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1.1
Նախագիծ

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների
## N ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 14/9

ք. Երևան «  » ---------------- 2014 թ.

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ------------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն -------------------------ի (այսուհետև՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովի 2014 թ-ի _______ ___-ի նիստի որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Մատակարար-Վաճառողը, հիմք ընդունելով <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի 2014թ-ի _________ ___-ի ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/9 ծածկագրով տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի որոշումը, Վաճառողը, պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը:

### 2. Ապրանքի գինը և վճարման կարգը

2.1. Սույն պայմանագրի գումարը կազմում է ___________ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ ________ ՀՀ դրամ, ընդամենը __________________ (____________________ տառերով__________տառերով___________) ՀՀ դրամ:

2.2. Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման, ինչպես նաև Մատակարար-Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.3. Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարար-Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.4. Գնորդը վճարումները կատարում է փաստացի մատակարարված ապրանքի դիմաց: Մատակարար-Վաճառողը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար Գնորդի հետ կազմում է հանձնման-ընդունման արձանագրություն, որի հիման վրա կազմում է հաշվապահական հաշիվ ապրանքագիր, և այն ներկայացնում է Գնորդին: Գնորդը հաշվապահական հաշիվ ապրանքագիրը(հարկային հաշիվը) ստանալուց հետո, 10(տաս) բանկային օրվա ընթացքում կատարում է վճարումը:

2.5. Վճարումներն իրականացվում են դրամական միջոցները Մատակարար-Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

### 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Գնորդն իրավունք ունի՝

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարրաաման ժամկետը խախտվել է 10 օրից ավել:

3.1.2. Եթե հանձնվել է ոչ պատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի ոչ պատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով ոչ պատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով, անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետներ նշանակել և պահանջել Մատակարար-Վաճառողից վճարելու սույն Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը:

գ)Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը

3.1.3. Եթե հանձնվել է ոչ պատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք՝

ա ) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել ոչ պատշաճ որակի Ապրանքը սույն

պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 7.3 կետով նախատեսված տուգանքը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.4. Եթե մատակարարվել է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք, ապա իր ընտրությամբ՝

ա) Ընդունել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանքը ի պահ և հրաժարվել մնացած Ապրանքներից:

բ) Հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

գ) Պահանջել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանքը անհատույց փոխարինելու սույն Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

3.1.5. Մատակարար-Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում, իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետներ, և պահանջել Մատակարար-Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6. Ապրանքն ընդունելիս պատշաճ ձևով զննել այն և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարար-Վաճառողին:

3.1.7. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.8. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.9. Մատակարար-Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է ոչ պատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետներում:

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

3.2. **Գնորդը պարտավոր է՝**

3.2.1. Յուրաքանչյուր ամիս Մատակարար Վաճառողին ներկայացնել հայտ Ապրանքի մատակարարման վերաբերյալ:

3.2.2. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.3. Մատակարար Վաճառողին հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարար Վաճառողին:

3.2.4. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները:

3.2.5. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3. **Մատակարար Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2. Գնորդից պահանջել վճարելու սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.5. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4. **Մատակարար Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1. Մատակարարված ապրանքների տեղափոխումը կատարել իր հաշվին:

3.4.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3. Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարված Ապրանքը:

3.4.5. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը

3.4.6. Սույն պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 7.2. և 7.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.7. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.8. Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայամանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.9. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. Մատակարարման պայմանները

4.1. Մատակարար-Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում, համաձայն Գնորդի ներկայացրած հայտի:

4.1.1. Գրավոր ուղարկելով նամակ Մատակարար-Վաճառողի սուն պայմանագրի 12 գլխում նշված հասցեով:

4.1.2. Բանավոր՝ զանգահարելով Մատակարար-Վաճառողին հետևյալ հեռախոսահամարով ____________________:

4.1.3. Լրացնելով համապատասխան on lain ձևաթուղթը Մատակարար-Վաճառողի ինտերնետային կայքում՝----------------էլեկտրոնային փոստի հասցեն------------------:

4.2. Մատակարար-Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին ՝ նրա կողմից նշված հասցեով:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2. Մատակարար-Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը միջազգային ստանդարտի պահանջներին:

5.3. Յուրաքանչյուր Ապրանքատեսակի գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.3.1.Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1. Մատակարար-Վաճառողն Ապրանքը հանձնում է Պատվիրատուին Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4)

6.3. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5-օրյա ժամկետում Մատակարար-Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը, կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3. Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4. Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Սույն պայմանագիրը համարվում է կնքված Կողմերի ստորագրման պահից և ուժի մեջ է մտնում գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և վճարման կարգը (N3 հավելվածը) սահմանող տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող համաձայնագրի

ստորագրման պահից և գործում է մինչև 201- թ-ի _____________ _-ին;

## 10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1.Սույն Պայմանագրի առնչությամբ կամ նրա շուրջը առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը վեճերը լուծելու դատական կարգով:

## 11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

11.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

11.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

11.4. Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

11.5. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

11.6. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

11.7. Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, և 4 հավելվածները՝ բաղկացած 4 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

11.8. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունք չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

11.9. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 12 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3<br>ՀՎՀՀ 02205028<br>Հ/Հ 2473600002170010<br><<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ<br>Շենգավիթ մասնաճյուղ<br><br>Գլխավոր տնօրեն՝ | |
| ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված 1
___ __________ 2014թ. կնքված
պայմանագրի

**Տեխնիկական բնութագիր**

տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների

| Չափա բաժնի համարը | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | քանակը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|---|
| 1 | Ամանեղեն լվանալու հեղուկ Ֆռոշ | հատ | 48 | – 1 լիտրանոց տարաներով. ոչ ալերգիկ, |
| 2 | Լվացքի փոշի Մաքս ունիվերսալ | հատ | 120 | - 350-400 գ- Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը` 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: |
| 3 | Ժավել | հատ | 120 | – տեղական արտադրության 1 լիտրանոց տարաներով |
| 4 | մաքրող նյութ Կոմետ | հատ | 120 | -փոշի , 0,5 լիտր տարողությամբ |
| 5 | Մաքրող միջոց Damestos | հատ | 120 | – հեղուկ 0,5 լիտր տարողություններով |
| 6 | Ապակի մաքրելու հեղուկ Միստեր Չիստեռ | հատ | 80 | - 550 մլ տարողությամբ |
| 7 | Զուգարանի թուղթ <<Ռեգինա>> ֆիրմայի | հատ | 1600 | - եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" |
| 8 | Անձեռոցիկներ <<Տենդեռ>> մաքսի | հատ | 100 | - Անձեռոցիկ սեղանի` երկշերտ, , թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": |
| 9 | Անձեռոցիկներ <<Սելպակ>> | հատ | 600 | - Անձեռոցիկ սեղանի` երկշերտ, , թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 50 կամ 70 հատանոց տուփերով, փափուկ թղթից: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված “Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի” |
| 10 | Հատակի փայլեցնող շոր Ամիգո ֆիրմայի | հատ | 40 | - 60x80 սմ չափսի |
| 11 | Մոպտեմա ֆիրմայի հատակափայտի թելեր | հատ | 40 | -հատակափայտի թելեր, հյուսվացքային բամբակյա հումքից: |
| 12 | Կահույքի փայլեցման միջոց Պօլօ տեսակի | հատ | 12 | - փայլեցնող միջոց կահույքի համար, աերոզոլային փաթաթվածքով: |
| 13 | Հատակի հեղուկ Էմսալ Լամինատ մաքրելու համար | հատ | 80 | – 1 լիտրանոց |
| 14 | Աղբի տոպրակներ Ամիգո ֆիրմայի | հատ | 3360 | - 60լ, աղբի պոլիէթիլենային տոպրակներ ՝սև գույնի աղբը թափելու համար |
| 15 | Աղբի տոպրակներ Ամիգո ֆիրմայի | հատ | 480 | - 120լ, աղբի պոլիէթիլենային տոպրակներ ՝սև գույնի աղբը թափելու համար |
| 16 | Խոհանոցի սրբիչ վաֆլենման | հատ | 20 | , պատրաստված բամբակից,ոչ պակաս երկարությունը 50 սմ, լայնությունը 40 սմ: |
| 17 | Խոհանոցի սրբիչներ Ռեգինա ֆիրմայի թղթից | հատ | 60 | 6 կամ 12 հատանոց գլանափաթեթներով, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված “Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի” |
| -Մատակարարումները պետք կատարվեն միայն գնորդի հայտերի հիման վրա:<br>-Բոլոր մասնակիցները հայտերի բացման նիստի ժամանակ պարտադիր պետք է ներկայացնեն իրենց կողմից առաջարկված ապրանքատեսակների նմուշները, չներկայացնելու դեպքում մասնակցի հայտը կմերժվի: | | | | |

**<u>Սույն տեխնիկական բնութագրին չհամապատասխանող մասնակցի հայտը կմերժվի:</u>**

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

------------------------------- -------------------------------

(ստորագրություն) (ստորագրություն)
Կ.Տ Կ.Տ

Հավելված 2
___ __________ 2014թ.կնքված
պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափ համարը | Չափաբ-նի անվանումը | Ապրանքի անվանումը | Միավորի գինը | Չափման միավորը | Քանակը / նախատեսված է 2014թ. համար/ | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Քանակը | Գինը |
| 1 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Ամանեղեն լվանալու հեղուկ Ֆռոշ | | հատ | | 16 | 16 | 16 | 48 | |
| 2 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Լվացքի փոշի Մաքս ունիվերսալ | | հատ | | 40 | 40 | 40 | 120 | |
| 3 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Ժավել | | հատ | | 40 | 40 | 40 | 120 | |
| 4 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Կոմետ | | հատ | | 40 | 40 | 40 | 120 | |
| 5 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Մաքրող միջոց Damestos | | հատ | | 40 | 40 | 40 | 120 | |
| 6 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Ապակի մաքրելու հեղուկ Բինգո | | հատ | | 30 | 25 | 25 | 80 | |
| 7 | Զուգարանի Թուղթ | <<Ռեգինա>> ֆիրմայի | | հատ | | 550 | 550 | 500 | 1600 | |
| 8 | Անձեռո ցիկներ | <<Տենդեռ>> մաքսի | | հատ | | 35 | 35 | 30 | 100 | |
| 9 | Անձեռո ցիկներ | <<Մելպակ>> | | հատ | | 150 | 150 | 150 | 450 | |
| 10 | Հատակի և կահույքի փայլեցման միջոց | Հատակի փայլեցնող շոր Ամիգո ֆիրմայի | | հատ | | 15 | 15 | 10 | 40 | |
| 11 | Հատակի և կահույքի փայլեցման միջոց | Մոպտեմա ֆիրմայի հատակափայտի թելեր | | հատ | | 15 | 15 | 10 | 40 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Հատակի և կահույքի փայլեցման միջոց | Կահույքի փայլեցման միջոցներ Պոլօ տեսակի | | հատ | | 4 | 4 | 4 | 12 | |
| 13 | Հատակի և կահույքի փայլեցման միջոց | Հատակի հեղուկ Էմսալ ալմինատ մաքրելու համար | | հատ | | 30 | 25 | 25 | 80 | |
| 14 | Աղբի տոպրակներ | Ամիգո ֆիրմայի 60լ | | հատ | | 1120 | 1120 | 1120 | 3360 | |
| 15 | Աղբի տոպրակներ | Ամիգո ֆիրմայի կամ 120լ - | | հատ | | 160 | 160 | 160 | 480 | |
| 16 | սրբիչներ | Խոհանոցի սրբիչ վաֆլենման | | հատ | | 15 | 5 | 5 | 20 | |
| 17 | սրբիչներ | Ռեգինա ֆիրմայի թղթից , 6 կամ 12 հատանոց գլանափաթեթ ներով, | | հատ | | 20 | 20 | 20 | 60 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
___ ___________ 2014թ.կնքված
պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 20 14 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | | ... % | ... % | ...% | ... % | 10% | 10 % | 10 % | 10 % | 10 % | 10 % | 20 % | 20 % | **100 %** |

**ԳՆՈՐԴ**

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
___ __________ 2014թ. կնքված
պայմանագրի

**Գնորդ** **Վաճառող**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N ___
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«______« «___________________« 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ---------------------------------------------------------------------------------------------------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «________« «__________________« 20 թ.

Պայմանագրի համարը՝_________________________.

Գնորդը՝ ի դեմս_______________________և Վաճառողը՝ ի դեմս________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «___« «__________« 20 թ–ից «____« «__________« 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Մատակարա-րումների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ------------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Մատակարարումը հանձնեց**
(ստորագրություն)
ազգանուն ________________________
Կ.Տ

**Մանակարարումը ընդունեց**
(ստորագրություն)
ազգանուն ________________________
Կ.Տ